ձեռս Լատինաց ամս 68։ Եւ ի Թուին 1758 Յոյնք վերըստին տիրեցին Ս. Տեղեաց, զորոց ունիմք ասել ի տեղւոջ իւրում։

Ի սմին ժամանակի Պապա Մինաս, որ վարեալ էր ընդ պաշտօն վեքիլութեան Ա֊Թոռոյն ամս 42 եւ անկեալ ի ներքոյ 200 քսակ պարտուց, եկեալ յերուսաղէմ չոքաւ ի Կոստանդինուպոլիս՝ խնդրել օգնութիւն ի գլխաւորաց ազգին ի վճարումն պարտուց. սակայն խռովութիւնք ժամանակին չեղեն նմա ձեռնտու, և օր քան զօր ածեալ բազմացաւ պարտքն մինչեւ ցաւուրս Շղթայակրի։

Յետ վճարելոյ Լատինաց զդատաստանս իւրեանց ընդ Յունաց, սկիզբն արարին հակառակիլ եւ ընդ Հայոց. զի խորհէին մերժել և խափան զրկել զնոսա ի տնօրինական Ս. Տեղեաց և յափշտակել զբաժինս նոցա, յօրէ օր սաստկացուցանելով զկռիւն և զվէճն։ Տեսեալ Յովհաննու Պատրիարքի թէ՝ չեն յապահովի սեպհականութիւնք ազգին, և միաբանք իւր կան յերերի յերեսաց բռնութեան Լատինաց, առաքեաց առ դատաւորն զվոխանորդն և զթարգմանն իւր զՔէորգ եւ զՔէոդորոս վարդապետս, տուեալ ի ձեռս նոցա զվաւերական գրեանս, զորս ունէին յաւուրց անտի Սէլիմայ առաջնոյ մինչեւ ցաւուրս իւրեանց և զերկուս դատաստանական գիրս, գրեալ յաւուրս Գրիգորի Պատրիարքի եւ Եղիազարու, յորս բացայայտ գրեալ էին բովանդակ բաժինք և սովորութիւնք Հայոց ի տաճարին Ս. Յարութեան, յԱյրն Բեթղեհէմի եւ ի գերեզմանին Ս. Աստուածածնի. և խնդրեցին ի դատաւորէն ընթեռնուլ զայնս, եւ բառնալ զնեղութիւնս Լատինաց. և դատաւորն հրաման ետ կոչել զվիաբանս Լատինաց, և եկին անդ տեսուչն Բաթիչտա, փոխանորդն և Թարգմանն եւ այլք, յորում ժամանակի բնակէին ի վանս իւրեանց Տէր Եւ Ա֊Թոռ կոչեցեալ, և ընթերցաւ յականջս նոցա զամենայն գրեանս Հայոց. ապա եհարց զնոսա. Թէ այսոքիկ տեղիք իրաւունք և սովորութիւնք ի Ս. Յարութեան, ի Բեթղեհէմ և ի գերեզման Ս. Կուսին իցե՞ն ի ձեռս Հայոց. և նոքա ասեն, ըստ զօրութեան հրովարտակաց և օրինաւոր դրոց՝ զորս ընթերցան առաջի մեր, տեղիքն, պաշտամունք եւ արարողութիւնք՝ իրաւունք են և սեպհական